4. ***Արամ Մանուկյան** 9, **Տիգրան Մեծի** 34 **շենքերի էներգարդյունավետ արդիականացման աշխատանքների իրականացում***

Վերջին տարիներին Աշտարակ համայնքում սկսվել են բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգման և ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքների բարեկարգման աշխատանքները, որը պայմանավորված է նորաստեղծ համատիրության խելամիտ աշխատանքով և բնակիչների հետ արդյունավետ համագործակցությամբ:

2019թ.-ին Տարածքային զարգացման զարգացման հիմնադրամի միջոցներով, համայնքի ներդրմամբ, հիմնովին կառուցվեցին Պռոշյան 11. Ա.Մանուկյան 16, Տիգրան Մեծի 5, ինչպես նաև առաջարկվող Ա.Մանուկյան 9 շենքերի մոտ 2600 քմ մակերեսով տանիքներ:

Ա.Մանուկյան 9, Տիգրան Մեծի 34 բազմաբնակարան շենքերում կառուցման օրվանից ի վեր հիմնանորոգումներ, առավել ևս ջերմամեկուսացմանն ու էներգախնայողությանն ուղղված աշխատանքներ չեն արվել:

Վերջին հարկերում բնակվող բնակիչների ջանքերով կամ ուժերով ջրամեկուսացվել են որոշ հատվածներ, իսկ մնացած մասերը մնացել է ազբոշիֆերով պատված:

Արամ Մանուկյան 9 շենքը համայնքի միակ բարձրահարկ շենքն է, որը տեսանելի է քաղաքի բոլոր հատվածներից: Բացի այն, որ իր կառուցվածքով և ինժեներական կոնստրուկցիաներով ջերմամեկուսացման և արտաքին տեսքի բարեփոխման կարիք ունի:

Տիգրան Մեծի 34 շենքերը գտնվում են էջմիածին տանող ճանապարհի վրա, խիտ բնակեցված թաղամասերից մեկում:

Բազմաբնակարան շենքերի ընտրությունը բացի վերոգրյալից, կատարվել է մի քանի չափորոշիչներով

1. *Համատեղ սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ հոգատար վերաբերմունք*
2. *Համատիրության փայավճարների գանձման բարձր տոկոս*
3. *Բնակչության մասնակցությունը համայնքային տարբեր նախաձեռնություններին*
4. *Հարակից տարածքում դպրոցի, մանկապարտեզի առկայություն*

Նախատեսվում է էներգարդյունավետ արդիականացման աշխատանքներ իրականացնել Արամ Մանուկյան փողոց հմ. 9 և Տիգրան Մեծի փողոց հմ. 34 շենքերում:

	Շենքի հասցեն	Կառուցման տարեթիվ	Տիպը	Ընդհանուր մակերես	Հարկայնություն	Բնակարանների թիվը	Մուտքերի քանակ	Բնակարանների թիվ վերջին հարկում	Հաշվարկային սեյսմակայունություն	Բնակիչների թիվը
1	Արամ Մանուկյան փողոց, շենք 9	1984	կարկասային	1408.8	9	35	1	35	7	158
2	Տիգրան Մեծի փողոց, շենք 34	1990	պանելային	990	4	16	1	16	7	91

***Արամ Մանուկյան փողոց**, **շենք** 9-ի տանիքը հիմնովին վերանորոգվել է* 2019թ.-ին՝ *Տարածքային զարգացման զարգացման հիմնադրամի միջոցներով և համայնքի*

ներդրմամբ, իսկ Տիգրան Մեծի փողոց, շենք 34-ի տանիքն ունի ազբոշիֆերով ծածկույթներ, որոնք տեղադրված են քայքայված, նախկինում չմշակված փայտե կոնստրուկցիաների վրա:
Քանի որ շենքը շրջապատված է պատշգամբերով, անհրաժեշտություն է առաջանում արտաքին տեսքի բարելավման նպատակով կազմակերպել բազրիքների միանմանության հնարավորություն: էներգարդյունավետ արդիականացման աշխատանքներ իրականացվելու են մոտ 2700 քմ մակերեսի վրա:

Տիգրան Մեծի փողոց, շենք *34-ում հեռացվելու է ամբողջ տանիքածածկույթը: Հեռացվելու է նաև տարիների ընթացքում տաանիքների տակ բնակչների կողմից կուտակած շինարարական աղբը, հին, օգտագործման համար ոչ պիտանի կահույքը, սարք-սարքավորումները և այլ նմանատիպ, աղբ հանդիսացող զանգվածը:*
Նորովի կառուցվելու է փայտյա կրող կոնստրուկցիաներ, որի վրա տեղադրվելու են նոր, ցինկապատ թիթեղյա տանիքածածկույթ:
Փայտյա կոնստրուկցիաները մշակվելու են հականեխիչ, հակահրդեհային նյութերով: Իրականացվելու է կազմակերպված ջրահեռացում: Տեղադրվելու են օդափոխության պատուհաններ և այլ անհրաժեշտ դետալներ, իրականացվելու է ջերմամեկուսացում:
Անվտանգության նորմերը ապահովելու նպատակով տանիքի պարագծով կառուցվելու է պաշտպանիչ ճաղաշար, երկարացվելու և երեսապատվելու են օդափոխության, ջեռուցման համակարգի համար նախատեսված խողովակատարները: էներգարդյունավետ արդիականացման աշխատանքներ իրականացվելու են մոտ 1100 քմ մակերեսի վրա:

Ծրագրի արժեքը՝ 130.000.000 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրում 26.000 ՀՀ դրամ
Կատարման ժամկետը՝ 6 ամիս

Արամ Մանուկյան փողոց, շենք 9





***Տիգրան Մեծի փողոց, շենք** 34*